ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
"HEMATOLOGY CENTER AFTER PROF. R. H. YEOLYAN" CJSCo

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"ГЕМАТОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ИМЕНИ ПРОФ. Р. О. ЕОЛЯНА" АОЗТ

375014 ՀՀ, Երևան, Հ. Ներսիսյան 7
7 Nersisyan str., Yerevan, Armenia
РА, Ереван, ул. Нерсисяна 7
☎ (374 10) 28 38 00, 28 38 93

12.05.2023 N 02-212

«ԳԱՄՄԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Հ. ՓԻԼՈՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Պատվիրատու) և «Գամմա Պրինտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Մատակարար) միջև 27.03.2023թ.-ին կնքվել է թիվ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/34-07 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր), որի.

թիվ 10 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի օճառ սև:

թիվ 16 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի հատակի լվացման լաթ բամբակյա:

թիվ 21 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի անձեռոցիկներ դիսպենսեր սարքի համար: Պայմանագրի տեխնիկական բնութագրով 21-րդ չափաբաժնի համար սահմանվել է՝
Անձեռոցիկներ, սրբիչներ նախատեսված դեսպենսերների համար, ջրակլանող՝ ջրից չպատրվող, տուփում 200 հատ, չափսերը նվազագույնը 230*230մմ:

Սույն թվականի ապրիլի 18-ին Մատակարարի կողմից մատակարարվել է 279 հատ օճառ սև, 600 հատ հատակի լվացման լաթ բամբակյա և 40000 հատ անձեռոցիկներ դիսպենսեր սարքի համար, որոնց վերաբերյալ 28.04.2023թ.-ին ընդունող հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն: Մասնավորապես՝ Պայմանագրով 21-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է, որ անձեռոցիկները պետք է լինեն ջրակլանող՝ ջրից չպատրվող, սակայն փաստացի մատակարվել է ջրից պատրվող անձեռոցիկներ: Իսկ 10-րդ չափաբաժնի մասով

Պայմանագրում ֆինանսական միջոցներ նախատեսվել է 200 հատ սև օճառի համար և պատվերը ևս եղել է 200 հատի համար, սակայն փաստացի Մատակարարը մատակարարել է 279 հատ: Պայմանագրի 2.1.2 կետի բ ենթակետի դրույթներին համապատասխան Պատվիրատուի կողմից սահմանվել է ողջամիտ ժամկետ մատակարարված ապրանքը փոխարինելու համար, սակայն Մատակարարը սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքի փոխարինում: Ինչպես նաև սահմանված ժամկետի ավարտից հետո հնարավոր չի եղել կապ հաստատել Մատակարարի հետ ոչ մի կոնտակտային միջոցով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագիրը. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մատակարարի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն միակողմանի հրաժարվում է 2023 թվականի մարտի 27-ին կնքված թիվ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/34-07 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՏՆՕՐԵՆ Ս.ԴԱՆԵԼՅԱՆ